



Զ Ե Կ Ո Ւ Ց Ո Ւ Մ

Ս. ԷԶՄԻԱՆՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՄԻԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Ս. ԷԶՄԻԱՆՆԻ ՄԻԱՔԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՐ

Հանգուցյալ Վեհափառի դառնադեպ մահից հետո, Գերագույն Հոգևոր Խորհուրդը, ժամանակավորապես, ստանձնեց ի պաշտոնե Մայր Աթոռի և Թեմերի գործերը վարելու ծանր և պատասխանատու պարտականությունը, մինչև նոր Կաթողիկոսի ընտրությունը:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, ըստ Ազգային-եկեղեցական ժողովի 1945 թվի Կանոնադրության, հնարավոր գտավ Ազգային-եկեղեցական ժողով հրավիրել հանգուցյալ Վեհափառի մահից մոտավորապես 15 ամիս հետո, Ամենայն Հայոց նոր Հայրապետի ընտրություն կատարելու և իր միամյա գործունեության հաշիվն ու մերձավոր ապագայի ծրագրերը ներկայացնելու նպատակով Ազգային-եկեղեցական պատկառելի ժողովի:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին Գեորգ Զ.ի օրով ապրել է հոգևոր զարթոնքի մի նոր ու խոստումնալից կյանք և՛ Մայր Հայրենիքում, և՛ Սփյուռքում: Ուրախությամբ արձանագրում ենք այն փաստը, որ հանգուցյալ Վեհափառի ծրագրի համաձայն հա-

մալրվում է Մայր Աթոռի միաբանության կազմը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևոր սպասին նվիրված գիտակից, պատրաստված, հավատալիք ու հայրենասեր նոր միաբանների ձեռնադրությամբ և ընտրությամբ:

Այսօր Մայր Աթոռի միաբանությունն ունի 17 անդամ՝ 1 արքեպիսկոպոս, 2 եպիսկոպոս, 14 վարդապետ-աբեղա: Հանգուցյալ Վեհափառը, 1945 թվի Ազգային-եկեղեցական ժողովում կարգացած իր ղեկուցման մեջ, գրել է այն մասին, որ առ այժմ «Ս. Էջմիածինը կարոտում է գոնե 20 միաբանի, որպեսզի հնարավորություն ունենա վանքի ներքին գործերը ղեկավարել, մինչև որ Հոգևոր Ճեմարանն ավարտած նոր սերունդ ունենալը, ավելի պատրաստ և ավելի ընդունակ հայ ժողովրդի և հայ եկեղեցու գործերը տնօրինող, կարիքները հոգացող»:

1954 թվի սեպտեմբերի 22-ը հոգևոր բերկրանքի ցնծատուն էր Մայր Աթոռի համար: Այդ օրը, Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը տվեց իր առաջին հունձքը՝ երիտասարդ

կուսակրոնների առաջին խումբը, որոնք ուստեցին աննահանջ սիրով ծառայել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն:

Վաղուց էր, որ Մայր Աթոռում տեղի չէր ունեցել ձեմարանավարտ ուսանողների ձեռնադրության շնորհաբաշխություն, հայ ժողովրդի սրտին մոտիկ նվիրական ու խորհրդավոր այդ սուրբ արարողությունը:

Սեպտեմբերի 12-ին, Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումով, սուրբ պատարագի ընթացքում, հավատացյալների և ուստավորների խումբն բազմության ներկայությամբ, Մայր Տաճարի ավագ Սեղանի վրա, պատշաճ հանդիսությամբ կատարվեց շնորհաբաշխության խորհուրդը. կուսակրոն քահանա ձեռնադրվեցին ձեմարանի շրջանավարտ բարեշնորհ Քաջիկ, Անդրանիկ, Սարգիս, Հենրիկ ավագ սարկավագները, որոնք ձեմարանն ավարտելուց հետո, 3 տարով, Վեհափառի ցանկությամբ ուղարկվեցին Մոսկվայի աստվածաբանական ակադեմիան, խորացնելու և ամբողջացնելու իրենց եկեղեցագիտական, աստվածաբանական, հայագիտական ու պատմական գիտելիքները, և որոնց միացան մի քանի ամիս հետո Պերմ և Տիգրան սարկավագները՝ կուսակրոն քահանայության ձեռնադրումով:

Ավելի քան միսիթարական ու քաջալերիչ է այն հանգամանքը, որ կենդանի է նախնայաց ծառայության, նվիրումի ոգին մեր նոր միաբանների՝ հոգեշնորհ Տ. Պարգե, Վահան, Հայրիկ, Նդիշե, Մուշեղ, Տիրայր նորընծա արեղանների սրտերում, որոնք կոչված են արժանավոր ծառանդորդները լինելու նախնայաց արյունով և կյանքով ձեռք բերված մեր ազգային-եկեղեցական հոգևոր անկրկնելի արժեքներին:

Այսօր, Գերագույն Հոգևոր Խորհրդի սեղանի վրա է նաև մի շարք պատրաստված, խոստումնալից, բարձրագույն և թերի բարձ-

րագույն կրթություն ունեցող հավատավոր ու պարկեշտ մարդկանց կուսակրոն քահանա ձեռնադրության հարցը, որոնք դիմել են վանական բարձրագույն իշխանության՝ մշտնելու Մայր Աթոռի միաբանության շարքերը, ուստելով աննահանջ սիրով և բոլորանվեր ծառայության ոգով սպասարկելու Մայր Աթոռում: Վստահ ենք, որ նորընտիր Հայրապետը իր հայրապետական օրհնությունը կշնորհի նրանց:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը այս օրերին զբաղվել է նաև մեր թեմերից ստացված մի շարք քահանայացուների դիմումով, որոնք ցանկություն են հայտնել քահանայադործելու մեր հայրենի թեմերում: Գերագույն Հոգևոր Խորհուրդը տվել է արդեն իր համաձայնությունը նրանց քահանայական ձեռնադրության համար:

Համոզված ենք, որ ազգային-եկեղեցական ժողովը գոհունակությամբ կընդունի այն փաստը, որ համառ աշխատանքների շնորհիվ, համալրվում է Մայր Աթոռի միաբանության անդամների թիվը: Ծիշտ է, համեստ է այդ հունձը իբր սկզբնավորություն, բայց մեծ ու հուսադրիչ է նրա նշանակությունը, բարոյական արժեքը և հեռանկարը: Լիահույս ենք, ազգովին, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում առաջիկա տարիներում ես տեղի կունենա ձեռնադրության շնորհաբաշխություն և զիտակից, նվիրված, զարգացած ու հայրենասեր նոր հոգևորականներ կգան լցնելու այն բացը, որ կա մեր ազգային-եկեղեցական կյանքում, մեր մեծ կորուստներից հետո:

Ավելի քան երեք համոզված ենք, որ տեղապես պայծառ է մնալու Մայր Աթոռում և հայրենի կապույտ երկնակամարում Ս. Լուսավորչի միշտ պլավացող կանթեղը, որը հազարամյակներով լույս ու ճանապարհ է ցույց տվել հայ ժողովրդին:

ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԵՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Պետության և Եկեղեցու, հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության հարցը միշտ էլ հանդիսացել է եկեղեցական իրավունքի կարևոր խնդիրներից մեկը: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին Պետության հետ իր փոխհարաբերությունն

րում առաջնորդվել է միշտ տերունական պատվերով՝ «Տուր զկայսերն՝ կայսեր և զԱստուծոյն՝ Աստուծոյն»:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին իր դարավոր կենսափորձով, իր պարտքը կատարել է հայ ժողովրդի և նրա պետակա-

նություն նկատմամբ մեծ սիրով, պարտքի և պարտականության խորը գիտակցությամբ:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին միշտ էլ հայրենասիրության վառ օրինակներ է տվել հայ ժողովրդին, հավատարմությամբ և սրբությամբ է կատարել իր պարտքը Հայրենիքի և Պետության նկատմամբ:

Այս սկզբունքների լույսի տակ, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին միշտ օրինավոր ու ազնիվ փոխհարաբերությունների մեջ է եղել Հայրենի իշխանության հետ, հանդես է եկել միասնական հայրենասիրության սրտառուլ քարոզներով, և միշտ էլ աշխատել է ժողովրդի հետ, ժողովրդի համար, Հայրենի պետության շուրջ համախմբելով ախուր ճակատագրի բերմամբ աշխարհում գրված հայ ժողովրդի բեկորներին:

Հանգուցյալ Վեհափառի տեղակալության և հայրապետության տարիներին, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Հայրենի հարազատ կառավարության փոխհարաբերությունները եղել են ավելի քան սերտ, բարեկամական: Ամենայն Հայոց Հայրապետության

տության դիրքը Սովետական Հայաստանի և Պետության հանդեպ եղել է օրինական, ուղիղ, ազնիվ, ինչպես պարտ է լինել Այդ են պահանջում հայ ժողովրդի շահը, մեր Եկեղեցու անցած պատմական ուղին, Հայ Եկեղեցու ոգին, դարավոր ավանդություններն ու պատմությունը:

Այս սկզբունքների լույսով է առաջնորդվել նաև Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը, Վեհափառի մահից հետո, Պետության հետ իր հարաբերություններում:

Այսօր մեր ժողովուրդը իր հարազատ Հայրենիքում բուժում է իր անցյալի վերքերը: Նա տերն է իր հողին, հացին, պատվին, իր ճակատագրին և արդար վաստակին: Հայրենի հողի վրա՝ աճում է նա՝ հայ ժողովուրդը, ժայռերից վարդեր է քաղում, քարերը վերափոխում է հացի, լույսի, կյանքի, և կյանքը դարձնում է անսասան բարիքների մի անսպառ աղբյուր: Ներկա և հետագա սերունդների համար: Ու այս ամենը՝ շնորհիվ ուսման մեծ ու ազնիվ ժողովրդի եղբայրական օժանդակության:

ՄԱՅՐ ԱԹՈՒՆ ԵՎ ՍՓՅՈՒՌԸ

Մայր Աթոռը և մեր ազգային-եկեղեցական թեմերը կազմում են մի օրգանական անքակտելի միասնություն: «Ծառն արմատով է ծառ, տունն հիմամբ է տուն»: Մեր ազգային-եկեղեցական միասնությունը արտահայտվել է և արտահայտվում է Մայր Աթոռի և թեմերի փոխհարաբերությամբ, որը և բնորոշում է մեր ազգային-եկեղեցական միասնությունը:

Մայր Աթոռի և մեր թեմերի փոխհարաբերությունների հարցը միշտ էլ Ազգային-եկեղեցական ժողովը և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին շահագրգռող կենտրոնական խնդիրներից մեկն է եղել:

Վերջին տարիներում կապը Սփյուռքի մեր թեմերի և նվիրապետական մյուս Աթոռների հետ ավելի քան երբեք ամրապնդվել, սեր-

տացել է երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ-ի օրոք:

Մեր ազգային-եկեղեցական թեմերի կազմակերպությունը և սրտագին, կենդանի կապը Մայր Աթոռի հետ, Վեհափառ Հայրապետի ուշադրության կենտրոնումն է եղել միշտ: Այդպիսի վերաբերմունք բխում էր Վեհափառ Հայրապետի «Եկեղեցական միասնականության և ազգային միասնության» գաղափարախոսությունից:

Մեր ազգային-եկեղեցական թեմերը կազմում են մեր եկեղեցական միասնականության օղակները, որոնք կոչված են կենդանի և գործարար կապ պահպանել Մայր Աթոռի հետ, որովհետև «մի է հայրն մեր, մի և միակրօն ազգն Հայոց»:

Այս բոլորից բխում է փոխադարձ կապի պահպանում Մայր Աթոռի և Սփյուռքի միջև,

պետք-հեղած ցուցմունքներն ու հրահանգները ստանալու համար, որպեսզի մեր թեմերը ի վիճակի լինեն պահպանելու դավանաբանական, ծիսական, պաշտամունքային, եկեղեցական կարգապահությունը, օրինապահությունն ու միաձևությունը, ըստ Եկեղեցու Սահմանադրության և դրսևորելու Հայ Եկեղեցու միասնականությունը, մի հանգամանք, որը դարերից ի վեր զորավիգ է հանդիսացել Հայ Եկեղեցու հոգևոր-ազգային նկարագրի անաղարտ պահպանմանը, մեր Եկեղեցու ինքնուրույնությունը:

Մեր եկեղեցական միասնականությունն ու կուռ կազմակերպվածությունը կարող են պահպանվել միայն ու միայն Մայր Աթոռի և թեմերի, նվիրապետական մյուս Աթոռների սերտ, աշխույժ, կենդանի և փոխադարձ հարաբերությամբ:

Դոհմանակության մեջ պետք է նշել այն փաստը, որ Սփյուռքի մեր հայրենասեր թեմականները ըստ ամենաքնի յուրացրել են Վեհափառ Հայրապետի եկեղեցական միասնականության և ազգային միասնության սրբազան պատգամը:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին քաղաքական կազմակերպություն չէ, որ քաղաքականությամբ զբաղվի: Մայր Աթոռը միշտ հեռու է կանգնած եղել քաղաքականությունից, նրա նշանաբանն է եղել «Տուր զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ»: Հանգուցյալ Վեհափառ Հայրապետը Իր սրբատառ կոնդակներում և հայրապետական կոչերում խրատել է մեր թեմերին՝ հեռու պահել Հայաստանյայց Եկեղեցին քաղաքական գործունեությունից և կուռակցական ազդեցությունից, լոյալ լինել և լոյալ մնալ օտար երկրների իրավակարգի հանդեպ, քանի որ տարբեր դիրքավորում չէր զուգորդվում ոչ միայն Հայ Եկեղեցու քրիստոնեական, հոգևոր ոգուն ու նկարագրին, այլ նաև մեր եկեղեցական միասնականության գաղափարին: «Պատուէր տամք նախ պանդխտեայ Հայոց որ ի Սփիւռս լինել հաւատարիմ պետութեանց յորոց գտեալ է նոցա ասպնջականութիւն եղբայրական» և «քաղաքական լոյալութիւն հյուրընկալ երկրների հանդեպ և եղբայրական համերաշխություն համակից ժողովուրդների հետ»: Իմաստուն և հեռա-

տես Հայրապետը խրատում էր Իր հոտին՝ հարգել հյուրընկալ երկրների անձեռնմխելությունն ու պետական անկախությունը, եղբայրարար և սիրով ապրել համակից և հարևան ժողովուրդների հետ, հարգել հյուրընկալ ժողովուրդների ազգային սրբազան իրավունքները, հեռու կենալ քաղաքականությունից, հարգել տեղական իշխանությունները:

Մայր Աթոռի խաղաղասիրական ընթացքը, որն արտահայտվեց հանգուցյալ Վեհափառի միջոցով վերջին տարիներին, կապված խաղաղության միջազգային շարժման հետ, բնական ու տրամաբանական հետևությունն էր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու քրիստոսավանդ խաղաղության, Հայ Եկեղեցու ժողովրդավեր ոգու, ազգային նկարագրի, մարդասիրական վեհ գաղափարների:

Մարդկության ստվար մեծամասնությունը խաղաղություն է աղաղակում, որովհետև ճաշակել է պատերազմի շարիքները, ըմպել պատերազմի դառնության բաժակը:

Հայ ժողովուրդը, աշխարհի ամենահին և կուլտուրական ժողովուրդներից մեկը և առաջին քրիստոնյա ժողովուրդը, իր պատմության ընթացքում շատ թանկ է վճարել խաղաղության համար, շատ է տառապել, աղոթել, պայքարել խաղաղության համար: Ցնորք չի եղել անցյալում մեր ժողովրդի և Եկեղեցու մեծ վիշտը, անարև կյանքն ու անխաղաղ գոյությունը: Երեսուն դարեր տառապել է նա խաղաղության համար, և ի վերջո գտել է խաղաղության և ազգային-եկեղեցական վերածնության միակ ու փրկարար ուղին:

Եվ այսօր մանավանդ, մեր երկիրը, մեր Եկեղեցին, մեր ժողովուրդը կարիքն ունեն խաղաղության, ներքին խաղաղ զարգացման հնարավորության, որից զուրկ են մնացել հազարամյակների ընթացքում:

Մայր Աթոռի այսպիսի խաղաղասիրական գործունեությունը, պարզ է, որ ընդհանուր ոչինչ չունի քաղաքականության հետ:

Մայր Աթոռը աղոթել է և միշտ էլ կաղոթի իր հոգու բովանդակ ջերմեռանդությամբ, իր քրիստոնեական հավատքի ամբողջ անկեղծությամբ՝ խաղաղության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Մի քանի խոսք Մայր Աթոռի ելևմտական և տնտեսական գործունեության մասին:

Ինչպես գիտեք, Մայր Աթոռը մի հաստատություն է, որի բնականոն գործունեությունը պահանջում է նյութական հսկա միջոցներ:

Մայր Աթոռը շունի շահութաբեր կալվածներ և եկամտի այլ աղբյուրներ: Մեր եկամտի հիմնական աղբյուրը հանդիսանում է մոմավաճառությունը և եկեղեցական ծիսակատարություններից (մկրտություն, պսակ, թաղում) ստացված կամավոր հոգևոր նվերները:

Մայր Աթոռի տնտեսական ապահովության ամբողջ ծանրությունը ընկել է մեր հայրենի թեմերի և թեմական խորհուրդների վրա, որոնք միշտ սիրով, զոհողությամբ ազնիվ վճարում են կատարել իրենց եկեղեցատիրական հոգևոր պարտականությունները Ս. Էջմիածնի հանգեպ:

Անցյալ տարի հանգուցյալ Վեհափառ Հայրապետի մահվան և թաղման կապակցությամբ կատարվեցին բացառիկ, արտակարգ ծախսեր, բայց Մայր Աթոռի տարեկան բյուջեն պահեց իր հավասարակշռությունը, շնորհիվ Գերագույն Հոգևոր Խորհրդի ձեռք առած տնտեսական մի շարք խնայողությունների:

Խոսելով Մայր Աթոռի ելևմտական գործունեության մասին, գոհունակությամբ պիտի նշել Վրաստանի թեմի և Նրեանի հայրապետական թեմի Մայր Աթոռի համար արած տնտեսական օժանդակության մասին:

Վրաստանի թեմի տարեկան օժանդակությունը Մայր Աթոռին, 1954 տարվա համար, եղել է 215.000 ռուբլի: Մայրաքաղաքի եկեղեցիներից, միայն Ս. Սարգիս եկեղեցական խորհուրդը 1954 տարվա համար Մայր Աթոռի գանձարանն է մուծել 210.000 ռուբլի:

Շիրակի թեմը վերջին տարիներում բարձրացրել է իր տարեկան եկամուտների քանակը, շնորհիվ ձեռք առնված կազմակերպչական աշխատանքների:

Բաքվի թեմի տարեկան օժանդակությունը Մայր Աթոռին տվյալ տնտեսական տարում կազմում է 109,000 ռուբլի, որը քիչ է.

համեմատած այդ թեմի հայ ազգաբնակչության թվին:

Իսկ Ռոստովի թեմի եկեղեցիներից մի քանիսը պետք եղած սրտցավ և հոգածու վերաբերմունքը չեն ցուցաբերում տնտեսական օժանդակության հարցում դեպի Մայր Աթոռը:

1945 թվին գումարված Ազգային-եկեղեցական սրբազուսմար ժողովում, Սփյուռքի մեր ազգային-եկեղեցական թեմերը որդեկան պարտավորություններ վերցրին իրենց վրա, Մայր Աթոռի նյութական ապահովության կապակցությամբ: Սահմանվեց բոլոր թեմերի համար հոգևոր տուրք՝ «Լուսավորչի լուսմ» անվան տակ, և որոշվեց թեմերի նյութական օժանդակության տոկոսի հարցը, նախած տվյալ թեմերի ընդհանուր եկամուտների:

Ցավ ի սիրտ այս պատկանելի ժողովում պետք է հայտարարեմ, որ Մայր Աթոռի տնտեսական ապահովության հարցում բոլոր թեմերը չեն, որ բարեխղճությամբ կատարեցին իրենց ստանձնած պարտավորությունները:

Այս ոչ ցանկալի հանգամանքը թերևս բացատրվի ոչ այնքան մեր Սփյուռքի մի շարք թեմերի և թեմական խորհուրդների անտարբերությամբ, որքան այն պայմաններով, որոնցում ապրում և գործում են մեր Սփյուռքի թեմերը: Այնուամենայնիվ, պետք էր մտածել Մայր Աթոռի տնտեսական ապահովության հարցի մասին և կատարել ստանձնած պարտավորությունները:

Հուլիս օրին, որ Ազգային-եկեղեցական այս պատկանելի ժողովը, որը ներկայացնում է բովանդակ հայությունը, կոնկրետ միջոցառումներ կնշի այս անգամ և՛ Մայր Աթոռի նյութական ապահովության մասին, որից կախված է Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռի բնականոն կյանքն ու ազգային-եկեղեցական օգտաշատ գործունեությունը:

Խոսելով Մայր Աթոռի բյուջեի ծախսերի բաժնի մասին, պետք է ասել, որ Գերագույն Հոգևոր Խորհուրդը ղեկավարվել է ծախսերի հարցում խնայողությամբ:

Մայր Աթոռի ծախսերի մեծ բաժինը արվում է Հոգևոր Ճեմարանի համար: Անցյալում ևս Մայր Աթոռի տարեկան բյուջեի կեսից ավելին ծախսվում էր Ճեմարանի կարիքների վրա: Այժմ ևս Հոգևոր Ճեմարանը, որպես սրբազան դարբնոցը նոր հոգևորականության պատրաստության գործում, մեր էլ սրտի ամենամոտ հաստատությունն է, որին շրջապատել ենք հայրական հոգածության, շխնայելով ոչ մի պիտանի և անհրաժեշտ ծախս այս սիրելի հաստատության համար: Ճեմարանն ունի բարձր, որակյալ

դասախոսական կազմ, ուսանողության սնունդի, հագուստեղենի, առողջապահական հարցերը միշտ էլ բավարարվել են լավագույն կերպով, սակայն միշտ մնացել ենք նյութական հնարավորությունների շրջանակներում: Մեր ծախսերի մի կարևոր մասն էլ գնում է Մայր Աթոռի միաբանության և վարչական-տնտեսական մասի աշխատողների համար: Այժմ թույլ տվեք ժողովին ներկայացնել 1954 տարվա ամբողջ և 1955 տարվա առաջին կիսամյակի տնտեսական հաշվեկշիռը, մուտքի և ելքի կամ եկամուտների և ծախսերի առանձին բաժիններով:

1954 Թ. (ՏԱՌԵԿԱՆ)

(հազար ռուբլիներով)

Մ Ո Ւ Տ Ք

1. Մնացորդ առ 1/1 54 թ.

Դրամարկղում	8.0	
Հաշվ. հաշվում	215.1	
Վալյուտ. հաշվում	57.8	280.9

2. Եկամուտներ.

Եկեղեցիներից	1136.0	
Օտար վալյուտայից	32.0	
Բացառիկ	456.5	
Այլ եկամուտներ	812.9	2437.4

Մանր.—
Բացի վերո-
հիշյալից, արտա-
սահմանի թեմերին
ուղարկված է ամ-
սագիր և օրացույց
101.4 հազար ռուբլի
արժեքով:

1. Վանք.

Դույքի հիմնական ձեռք
բերում 16.8

Աշխատավարձ 510.0

Դրասինյակային,
փոստահեռ. 12.0

Կոմունալ ծախսեր 25.0

Նորոգում-բարեկարգում 65.0

Ավտոների նորոգում 16.0

Արտակարգ ծախսեր

(Վեհի մահվան կապակ-
ցությամբ) 287.0

Այլ ծախսեր 129.0

Ե Լ Ք

1060.8

2. Ճեմարան.

Դույքի ձեռք բերում 45.0

Աշխատավարձ 122.0

Մոտենդ 107.0

Այլ ծախսեր 90.0

364.0

3. Ամսագիր.

11 համար 195.0

4. Օրացույց.

(1954 և 1955 թ. թ.) 126.0

Մնացորդ առ 1/1 55 թ.

Դրամարկղում 48.4

Հաշվ. հաշվում 865.3

Վալյուտ. հաշվում 58.8

972.5

Բ ա լ ու ն ի 2718.7

Բ ա լ ու ն ի 2718.7

1955 թ. (I ԿԻՍԱՄՅԱԿ)

(հազար ուրվիներով)

Մ Ո Ւ Տ Ք

1. Մնացորդ առ I/I 55 ր.

Գրամարկդում	48.4	
Հաշվ. հաշվում	865.3	
Վալյուտ. հաշվում	58.8	972.5

2. Եկամուտներ.

Եկեղեցիներից	624.1	
Այլ եկամուտներ	14.7	638.8

1. Վաճառ.

Գույքի հիմնական ձեռք բերում	44.3	
Աշխատավարձ	256.6	
Գրասենյակային, փոստ.-հեռ.	18.5	
Կոմունալ ծախսեր	19.0	
Գործուղում, հյուրընկալ	40.8	
Նորոգություններ	63.8	
Վառելիք	8.9	
Այլ ծախսեր	35.3	487.2

2. ձեմարան.

Գույքի ձեռք բերում	4.8	
Աշխատավարձ	70.5	
Սնունդ	48.9	
Այլ ծախսեր	12.6	136.8

3. Ամսագիր.

5 համար	86.7	
---------	------	--

Մնացորդ առ I/VII 55 ր.

Գրամարկդում	7.5	
Հաշվ. հաշվում	834.3	
Վալյուտ. հաշվում	58.8	900.6
Բ ա լ ա ն ս՝		1611.3

Բ ա լ ա ն ս՝ 1611.3

ԵԱՅՐ ՏԱՀԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ

Խնչպես հայտնի է Ազգային-եկեղեցական ժողովի բանիմաց պատգամավորներից, Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, որպես հնագույն ու պատմական հոյակապ կոթող, տասնյոթ դարերի պատմություն ունի: Ս. Էջմիածնի Մայր Տաճարը Քրիստոնեական Ընդհանուր եկեղեցու հնագույն և առաջին հուշարձաններից մեկն է աշխարհում, կառուցված լինելով, ըստ միաձայն վկայության մեր պատմիչների, 303 թվականին, Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի համաձայն:

Ս. Էջմիածնի Տաճարը իր պատկանելի հնությունը, ճարտարապետական ոճի և կառուցվածքի իր բազմադանությունը և առանձնահատկություններով, հայ կյանքում կատարած իր ազգային-եկեղեցական-մշակու-

թային-պատմական դերով, հանդիսանում է հայ հավատացյալ ժողովրդի ամենանվիրական ուխտավայրերից հնագույնն ու համազգայինը:

Ս. Էջմիածնի Մայր Տաճարը դարերի ընթացքում ենթարկվել է բնական ու քաղաքական փոթորիկների պատճառած ավերածությունների և վերանորոգվել է տարբեր ժամանակներում, հինգերորդ դարից, Վահան Մամիկոնյանի օրերից մինչև Խրիմյան Հայրիկի օրերը:

Մեր անգուցական կոթողի՝ հնադարյան Մայր Տաճարի վերանորոգության հրատապ հարցը Նորին Ս. Օծուխյուն հանգուցյալ Տ. Տ. Գևորգ Զ.ի սրտի ամենամոտիկ հարցն է եղել: Վահագն Հայրապետի սրտի ամենա-


խոր ու նվիրական իղձն է եղել «ներքնապես և արտաքնապես հիմնովին վերանորոգված» տեսնել Մայր Տաճարը:

Իր ընտրությունից հետո, Իր սրտի ցանկալի իղձը անմիջապես իրագործելու համար, վեհափառը ձեռնամուխ եղավ Տաճարի վերանորոգության նախապատրաստական աշխատանքներին, երիտասարդական թափով և խանդավառությամբ: Հակառակ բոլոր բարի ցանկություններին, ձգձգվեց վերանորոգության հարցը, մինչև մահը վրա հասավ, և նա Իր իմաստուն ու բարի աչքերը փակեց, առանց տեսնելու Տաճարի վերանորոգությունը:

ամենախոր ու անկեղծ զգացմունքներ առաջացրեց Հայրենիքի և Սփյուռքի բովանդակ հայության մեջ:

Թույլ տվեք այժմ համառոտակի կանգ առնել կատարված վերանորոգման աշխատանքների վրա:

Մայր Տաճարի նորոգության աշխատանքները ընդունեցին լայն բնույթ: Պետական մի շարք մարմինների հետ միասին, ինչպիսիք են Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհուրդը, Ճարտարապետական գործերի վարչությունը, Հնությունների պահպանության կոմիտեն,



Ազգային-եկեղեցական ժողովի նիստերի դահլիճում

1954 թվի աշնան օրերին սկսվեց Տաճարի վերանորոգությունը: Տաճարի վերանորոգության աշխատանքները կատարվեցին այն սկզբունքով, որ պահպանվեն Տաճարի պատմական, ճարտարապետական ինքնատիպ առանձնահատկությունները, շենքի կայունությունը հետագա դարերի համար:

Ինչպես հայտնի է Ազգային-եկեղեցական ժողովից, 1954 թվին, Հայրենի հարազատ պետությունը հանձն առավ հոգալ դարերի բովից անցած պատմական այս հույակապ հուշարձանի վերանորոգության ամբողջ ծախսը: Հայրենի հարազատ պետության այս շնորհալի ձեռնարկը՝ երախտագիտության

Քաղաքային և գյուղական շինարարության մինիստրությունը իրենց ամենաեռանդուն մասնակցությունը բերեցին հայտնի ճարտարապետների, նկարիչների, ինժեներների, հնագետների հետ այդ հույժ կարևոր աշխատանքներին:

Օգտվելով առիթից, կամենում եմ Ազգային-եկեղեցական ժողովի անունից շնորհակալություն հայտնել հատկապես Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պարոն Հրաչյա Գրիգորյանին, ճարտարապետական գործերի վարչության պետ պարոն Ռուբեն Ազիզբեկյանին, Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի նախագահ պարոն

կոնստանտին Հովհաննիսյանին, Քաղաքային և գյուղական շինարարության մինիստր պարոն Մնացական Սարգսյանյանին, նրա տեղակալ պարոն Սարգիս Շահնազարյանին, մեր մեծարգո բանաստեղծ Ավետիք Իսահակյանին, ժողովրդական նկարիչներ պ. պ. Մարտիրոս Սարյանին և Հակոբ Կոջոյանին, արվեստի վաստակավոր գործիչ նկարչուհի Դանտովային, պրոֆ.-դոկտ. Աշոտ Աբրահամյանին, Հայաստանի Պետական թանգարանի վարիչ պարոն Կարո Ղաֆազարյանին, ճարտարապետներ Սամվել Սաֆարյանին, Լիպարիտ Մադոյանին, ինժեներներ Ավետիք Զոհրաբյանին, Կանեցյանին, Ալեքսանդր Մուսայելյանին, մյուս բոլոր նկարիչներին և գործավորներին, որոնք ոչ մի ջանք չխնայեցին Մայր Տաճարի նորոգության աշխատանքների լավագույն հաջողության համար:

Մայր Տաճարի նորոգման կարևոր աշխատանքներից մեկը նախկին զարդանկարների վերականգնման հարցն էր: Ինչպես հայտնի է, տանիքից ծծվող խոնավության պատճառով, զարդանկարների մեծ մասը ոչնչացել էր, բացի կենտրոնական գմբեթի նկարներից: Այսպիսով հարկ եղավ ամբողջությամբ նկարազարդել Տաճարը: Կատարված նկարչական աշխատանքների ընդհանուր ծավալը, միայն Տաճարի ներսում, հաշված նաև թանգարանի երեք ցուցասրահների ու կենտրոնական մուտքի կամարը, կազմում է ավելի քան 2.600 քառակուսի մետր:

Ամբողջովին վերականգնվել են Նաղաշ և Հովնաթան Հովնաթանյանների որմանկարները, որոնք հայկական ոճի հետ միասին կրել են իրենց վրա նաև ժամանակի կնիքը: Վերանորոգելով նախկինը, շինարարների նպատակն է եղել պահպանել հինը, մեր խոշոր նկարիչների գործը, որպես պատմական որոշակի գեղարվեստական արժեք ներկայացնող ստեղծագործություն:

Մյուս մեծ աշխատանքը, որը կատարվել է Տաճարում, դա գմբեթակիր շորս սյուներն էր: Բարձր միացնող կամարների ամրացումն էր նորոգման աշխատանքների ընթացքում պարզվեց, որ բոլոր սյուներն էլ խոնավության հետևանքով կենտրոնական գմբեթի ծանրության տակ ստացել են լուրջ ճեղքվածքներ, և որ դրանց խարխուլ վիճակը սպառնում է Տաճարի կանգունությանը: Հարց դրվեց ամրացնել սյուներն ու կամարները: Դժվարին գործ էր այդ, սակայն մեր տաղանդավոր ճարտարապետներն ու ինժեներները պատվով կատարեցին այդ դժվար աշխա-

տանքը: Չորս սյուներն էլ հիմքերից մինչև կամարները շորս կողմերից առնվեցին պողպատյա կապանքների և գոտիների մեջ և բոտանապատվեցին: Մասնագետների հայտարարությամբ՝ սյուները և կամարների այս կերպ ամրացումը իսպառ բացասում է Տաճարի կանգունությանը սպառնացող վտանգը:

Այս նորոգություններից հետո Միածնաէջ Մայր Տաճարը կանգուն կմնա հազարամյակներ, ի փառս Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և մեր ճարտարապետական արվեստի:

Վերանորոգվել և նկարազարդվել են թանգարանի ցուցասրահները, Իջման սեղանը, թիթեղապատվել է Տաճարի տանիքը, նորոգվել են դռներն ու պատուհանները, Տաճարի ամբողջ հատակը, որի մի մասը պատած է մարմարով: Հետագայում նախատեսվում է մարմարապատել ամբողջ հատակը: Ամբողջովին ձևափոխվել է Մայր Տաճարի էլեկտրական լուսավորման ցանցը:

Հարգելի պատգամավորներ՝ և հյուրեր՝: Այս նորոգության հետևանքով Մայր Տաճարը ընդունել է սիրուն ու շքեղ տեսք: Բայց այդ չէ բոլորը: Մայր Տաճարի անբաժանելի մասն են կազմում Հովհաննիսյանի և Գալանի վանքերը, որոնք մնում են դեռ չվերականգնված: Մնում է նաև Մայր Տաճարի ներքին կահավորումը: Զահերը, վարագույնները, սրբապատկերները, հատակի գորգերը թողնում են անհրապույր տպավորություն: Մայր Տաճարը զարդարված չէ այնպես, ինչպես հարկ է որ լինի, մասնավորապես այս նորոգումներից հետո: Մենք գտնում ենք, որ Ազգային-եկեղեցական այս սրբազումար ժողովրդ կրթող Մայր Տաճարի ներքին զարդարանքի հույժ կարևոր հարցով: Եվ մեր հավատացյալ հայ ժողովուրդը, մեր բարեպաշտ բարերարները ոչ մի ջանք չեն խնայի պայծառ և պատշաճ ձևով զարդարելու համար Մայր Տաճարը:

Տաճարի նորոգումներից բացի հիմնական նորոգության է ենթարկվել Վեհարանի ամբողջ շենքը: Վանքի շուրջ կառուցվել է նոր պարիսպ, նորոգվել են խցերի, ճեմարանի, ճաշարանի շենքերը: Բարեկարգվել է Մայր Տաճարի շրջապատը:

Վերանորոգության այս աշխատանքների վրա մեր պանծալի Սովետական Հայաստանի Հայրենի կառավարությունը իր միջոցներից, որքան մեզ հայտնի է, ծախսել է մոտ 4.000.000 ռուբլի:

ԱՅՆ ՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ազգային-եկեղեցական ժողովի հարգելի պատգամավորներ՝

Մեր Հայրենի հողը պատմական անկրկնե-

լի և հույակապ հուշարձանների, խաչքարերի մի սուրբ աշխարհ է, որտեղ յուրաքանչյուր կտոր քարի, ժայռի վրա հավերժացել է հայ

ժողովրդի մտքի, հոգու, սրտի, ձեռքի մեղսաբանությունը գեղեցկությունն ու շնորհը: Բայց դրանցից շատերի վրայով անցել է ավերիչ ժամանակը, քնական ու քաղաքական փոթորիկների ամենի ալիքը:

Առաջին հերթին, կցանկանալի ժողովրդ ուղադրությունը հրավիրել մեր մի շարք եկեղեցիների և վանքերի նորոգության վրա, որտեղ ամեն օր կատարվում է սուրբ պաշտամունք:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը քննության առավ մի շարք վանքերի և եկեղեցիների նորոգության անհրաժեշտությունը և որոշում կայացրեց նրանց նորոգության մասին: Ուրախ ենք այսօր հայտարարելու Ազգային-եկեղեցական ժողովի այս նիստում, որ հաջողվեց մասնակի նորոգությունը մեր մի շարք եկեղեցիների: Նրանում նորոգվեցին երեք եկեղեցիներ, կենդանականում՝ մեկ, Թբիլիսիում՝ մեկ: Մասնակի նորոգման ենթարկվեցին Նոր-Նախիջևանի, Բաքվի մի շարք եկեղեցիներ: Այժմ նորոգության ընթացքի մեջ է Ս. Հռիփսիմի վանքի ընակելի շենքը, որի բոլոր ծախսերն իր վրա է վերցրել Մայր Աթոռի միաբան և Ս. Հռիփսիմի վանքի վանահայր բարձրապատիվ Ս. Նահապետ վարդապետ Մուրադյանը, որին հրապարակով օրհնում ենք և շնորհակալություն ենք հայտնում: Նորոգվում են նաև Մայր Աթոռի հաշվին Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցին, Խոր-Վիրապի, Բջնիի և Գեղարդի վանքերը: Նորոգության շտապ կարիք ունեն Շողակաթի և Գայանեի պատմական վանքերը, վանքի պահեստին-

ըր: Այս նորոգությունների շուրջ կցանկանալի հրավիրել ժողովրդ ուղադրությունը:

Ազգային-եկեղեցական ժողովի առաջնահերթ խնդիրներից մեկը, ուրեմն, մեր վանքերի և եկեղեցիների վերանորոգման, պահպանման հրատապ հարցն է: Ինչ մենք կարող էինք անել մեր միջոցներով, արել ենք, բայց հիմնական ու ծավալուն այս վերանորոգության համար անհրաժեշտ է Ազգային-եկեղեցական ժողովի դրական օժանդակությունն ու Ափյուռքի մեր հայրենասեր ու եկեղեցասեր բարեգործների առատաձեռն նյութական օժանդակությունը:

Միևնույն ժամանակ, որ Մայր Հայրենիքի և Ափյուռքի հավատացյալ հայ ժողովրդի առատաձեռն նվիրատվությամբ, կկարողանանք վերականգնել նաև այն վանքերն ու եկեղեցիները, որոնց լուսեղեն խորանների առաջ աղոթել, երգել, պալքարել ու մեռել են մեր պանծալի նախնիքները:

Այդ վանքերի նորոգության հարցը հայ հավատացյալ ժողովրդի, մեր եկեղեցասեր, բարի և ազնիվ, Ս. Էջմիածնի հարազատ պալակ հայ մեծատունների պատվի, խղճի, ազգային արժանապատվության խնդիրն է: Մեր նախնիքները, քար առ քար, Արարատյան դաշտի վրա բարձրացրել են անհուն զոհողություններով այդ հույակապ վանքերն ու եկեղեցիները, որոնց անունները սերտորեն կապված են հայ մշակույթի պատմության հետ. մենք ևս գոնե կարողանանք պահել այն ու հանձնել հաջորդ հայ սերունդների գուրգուրանքին և պաշտամունքին:

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու վերականգնման աշխատանքներում միշտ էլ վճռական դեր են կատարել մեր հոգևոր ձեմարաններն ու դպրեվանքերը, ժողանդավորաց վարժարաններն ու ընծայարանները: Այդ իսկ պատճառով, Ս. Էջմիածնի նորաբաց Հոգևոր ձեմարանը հանդիսացավ հանգուցյալ Վեհափառի սրտի ամենամոտիկ հաստատությունը: Վեհափառի ցանկություններից մեկն է եղել նորաբաց ձեմարանի շրջանավարտներով ի վիճակի գտնվել ծածկելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ասպարեզում եղած բացը:

Հանգուցյալ Վեհափառը մեծ հույսեր էր կապում ձեմարանի գոյության, հարատևության և նպատակներին: «Այժմ վստահ կարող ենք լինել, — գրել է նա, — Ս. Էջմիածնի ձեմարանը, Ս. Նրուսահեմի և Տանն Կիլիկիո ընծայարանների հետ, ըստ ամենայնի ի վիճակի կլինեն հայ ժողովրդի հոգևոր, եկեղեցական կարիքները հոգալու և նորա կրոնական դաստիարակության գործը բարձր

մակարդակի վրա դնելու, որը այնքան կարևոր է հենց ժողովրդի հոգևոր զարգացման, կուլտուրական զարգացման և ազգային խնդիրների լուծման համար»:

Վեհափառ Հայրապետի ցանկությունն էր Հոգևոր ձեմարանի միջոցով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին դարձնել մեր օրերում էլ շնչող, կենդանի և անհրաժեշտ մի հաստատություն:

Հոգևոր ձեմարանը սակայն դրամական խոշոր գումարների պահանջող հաստատություն է: Հոգևոր ձեմարանի ամբողջ ծախսը մինչև այժմ հոգացել է Մայր Աթոռը, հայրենի թեմերի նվիրատվությամբ: 1945 թվի Ազգային-եկեղեցական ժողովում, մեր բոլոր թեմերի ներկայացուցիչները հանդիսավոր խոստումներ տվեցին ձեմարանին օգնելու համար, բայց այդ խոստումների մի մասը անկատար մնաց: Չնայած տնտեսական ծանր պայմաններին, հանգուցյալ Վեհափառի անդու ջանքերի շնորհիվ ձեմարանը պահեց իր գոյությունը: Այժմ ժամա-

նակն է, որ հանդիսավոր այդ խոստովանելու գործի վերածվեն և կատարվեն թեժերի կողմից ստանձնած առանձին պարտականությունները:

Հոգևոր ծեմարանի գոյության, հարատևության հարցը Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հավատացյալների խղճի, հավատքի գործն է: Հարկավոր է շատ լրջորեն ու մտածված ձևով մոտենալ այս խիստ կարևոր գործին:

«ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳԻՐԸ

Ազգային-եկեղեցական ժողովի մեծահարգ պատգամավորներ:

Հանգուցյալ Վեհափառի առաջին ու կարևոր ձեռնարկումներից մեկը հանդիսացավ նաև, ինչպես հայտնի է պատգամավորներիդ, «Էջմիածին» ամսագրի հրատարակությունը: Հանգուցյալ Վեհափառը շատ ճիշտ էր մտածել, որ մեծ ու պատասխանատու դեր է վիճակված մեր կրոնական մամուլին, հայ ժողովրդի կրոնական, քրիստոնեական, հայեցի դաստիարակության գործում: Եվ ահա, 1944 թվից, Վեհափառի տեղակալության օրերին, սկսվեց հրատարակվել «Էջմիածին» ամսագիրը, որը հանդիսացավ նախկինում հրատարակվող «Արարատ» ամսագրի շարունակությունը:

«Էջմիածին» ամսագիրը Ամենայն Հայոց Հայրապետության պաշտոնավթերթն է, Վեհափառի կենդանի խոսքը՝ ուղղված էր հոտին, էր ժողովրդին, էր զավակներին:

Ամսագիրը պատվով և սրբությամբ է կատարել Վեհափառի կողմից իր առաջ զբաղված ազգային-եկեղեցական խնդիրները, հավատքի, հայրենասիրական կենդանի խոսք է մատուցել հայ հավատացյալ ժողովրդին, իր խմբագրականներով ուղղություն է տվել մեր ազգային-եկեղեցական կյանքին, արձագանքել է Մայր Աթոռի և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հետ կապված միջ-եկեղեցական, միջազգային կրոնական հարցերին, ոսկեղեն կամուրջ է հանդիսացել Մայր Աթոռի և թեմերի, Մայր Հայրենիքի և տարագրի Սփյուռքի միջև, մտել է ամեն տուն ու երդիք, իր հետ տանելով հայ հավատքի, հայ նվիրականությունների անշեջ հուրն ու Հայրենիքի ջերմացնող շունչն ու գաղափարը, զբաղվել է Հայ եկեղեցու մատենագրության, մեր ազգային-եկեղեցական պատմության, գրականության, արվեստի, բանասիրության հարցերով և լուսարանություններով: Ու այդ բոլորը կատարվել է Վեհափառ Հայրապետի անմիջական ցուցմունքներով, ղեկավարությամբ, հրահանգներով: Փաստորեն

ծեմարանը թևակոխել է իր գոյության 10-րդ տարին և նա պատվով է կատարել իր առաջ զբաղված խնդիրները:

Ծեմարանը տվել է արդեն իր առաջին հունձը՝ կուսակրոն քահանաների առաջին խոստովանալից խումբը, որոնց մասին խոսեցի արդեն, և որոնք լծվել են վանական, վարչական, կրթական-դաստիարակչական, թեմական-առաջնորդական աշխատանքներին:

ամսագրի գլխավոր խմբագիրը հանդիսացել է Ինքը՝ մեծանուն Հայրապետը, որը նստած մինչև ուշ գիշեր էր աշխատանքի գրասենյակի առաջ, ծրագրել, խորհրդածել, գրել և ղեկավարել է ամսագրի բոլոր աշխատանքները՝ Իր մտքի, սրտի գանձերը մասնիկ առ մասնիկ թափելով ամեն մի տողի, ամեն մի նախադասության մեջ:

Ամսագրի խմբագրական և վարչական աշխատանքներում Վեհափառին օգնում էր խմբագրական մարմինը, որն իր ցուցմունքները ամեն մի համարի համար ստանում էր Վեհափառից:

Ահա այսպիսի հանգամանքներով «Էջմիածին» ամսագիրը մեր ազգային-եկեղեցական կյանքում դարձավ մի հոգևոր անհրաժեշտություն, որը կրոնական-ազգային-եկեղեցական սնունդ է մատակարարում հայ հավատացյալ ժողովրդին և մեր հավատավոր աճող նոր սերնդին:

«Էջմիածին» ամսագիրը լույս է տեսնում 2.000 օրինակ տպաքանակով, որից 1.000 օրինակը ուղարկվում է Սփյուռքի մեր թեմերին, իսկ 1.000 օրինակը սպառվում է Մայր Հայրենիքի և Սովետական Միության մյուս թեմերում:

Ամսագիրը թևակոխել է արդեն իր գոյության 11-րդ տարին: Ամսագրի աշխատանքներին իրենց օգտակար աշխատակցություն են բերել մեր հայտնի հայազետներն ու գիտնականները, զարգացած ու հայրենասեր եկեղեցականները: Ամսագրին աշխատակցել են մեծանուն գիտնականներ՝ Զ. Աճառյանը, Ստ. Մալխասյանը, Երվանդ Շահազիզը, պրոֆ. Ա. Առաքելյանը, պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանը, եկեղեցականներից՝ հանգուցյալ Վեհափառ Հայրապետը, հանգուցյալ Գարեգին Վեհափառը, Արտավազդ արքեպիսկոպոսը, Ռուբեն արքեպիսկոպոս Դրամբյանը, Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը, Վաղգեն եպիսկոպոս Պալճյանը, Ծեմարանի դասախոսները, միաբանության տարեց և երիտասարդ անդամները, Սփյուռք

քի մտավորականներից պ. պ. Արամ Երիմ-
յանը, Նուպար Մաքսուտյանը և ուրիշները:

Ամսագրում պարբերաբար տպվել են Վե-
հափառի պաշտոնական կոնդակներն ու
հայրապետական կոչերը, մեր թեմերի տա-
րեկան զեկուցագրերը, թեմերի մասին թղ-
թակցությունները: Վերջին տարիներին մեծ
ուշադրություն է դարձվել ամսագրի կրոնա-
կան բովանդակության և ուղղության վրա,
խմբագրականներ են դրվել ազգային-եկե-
ղեցական մեծ տոների, տարեգարձների,
տաղավարների մասին, ամեն համարում
եղել է լուսերի բաժին՝ Մայր Հայրենիքից և
Սփյուռքից: Ամսագիրը խնդիր է ունեցել
նաև Մայր Հայրենիքը ծանոթացնել Սփյուռ-
քի հայությանը և Սփյուռքի հայությունը՝
Մայր Հայրենիքի մեր ամսագրի ընթերցող-
ներին:

Ազգային-եկեղեցական այս սրբագրված
ժողովի բարձր ուշադրության ենք հանձնում
այն հանգամանքը, որ ամսագիրը նյութա-

կան խոշոր միջոցներ պահանջող մի ձեռ-
նարկ է, որի նյութական ապահովության
ամբողջ ծանրությունը, կրկնում ենք, ընկել
է Մայր Հայրենիքի թեմերի և Վեհափառի
ուսերի վրա:

Խնչպես հայտնի է, 1945 թվի Ազգային-
եկեղեցական այդ պատկանելի ժողովում
լիբանանի պատգամավոր պարոն Մկրտիչ
Մարյանը հանդիսավոր խոստումներ տվեց
Մայր Աթոռը սեփական տպարանով օժտելու
մասին, բայց այդ խոստումները մնացին
անկատար մի շարք պատճառներով: Այնու-
ամենայնիվ, Մայր Աթոռում սեփական
տպարան ունենալու հարցը, այսօր ավելի
քան երբեք, հրատապ, անհետաձգելի պա-
հանջ է ոչ միայն «Էջմիածին» ամսագրի
կանոնավոր հրատարակության, այլ նաև
մեր ազգային-եկեղեցական մատենագրու-
թյան դարձադման, ծիսական, արարողական
գրականության (ժամագիրք, Մաշտոց, տա-
ղարան, շարական) տպագրության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՒՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՆԵՐԻ ՀԵՏ

Հանգուցյալ Վեհափառ Հայրապետի դա-
հակալության տարիներին Մայր Աթոռը շա-
հազորգող կենտրոնական կարևոր հարցերից
մեկն է եղել նաև Մայր Աթոռի և քրիստո-
նեական քույր եկեղեցիների հետ հարա-
բերության հարցը:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու
դարավոր ու պատմական կենտրոն Ս. Էջ-
միածնի Ամենայն Հայոց Հայրապետությունը,
իր պատմության ողջ ընթացքում, ղեկա-
վարվել է մյուս քրիստոնեական քույր եկե-
ղեցիների նկատմամբ քրիստոնեական լայ-
նախոհության, ներողամտության ոգով, փո-
խադարձ սիրո և հարգանքի մեծ սկզբունք-
ներով: Կրոնական բռնապետությունը, մյուս
եկեղեցիների վրա իշխելու, նրանց ներքին
գործերին խառնվելու փառասիրական ձրգ-
տումներ, իշխանության հիվանդագին երե-
վույթներ խորթ են Ամենայն Հայոց Հայ-
րապետներին:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին,
իր գոյության ողջ ընթացքում, քրիստոնեա-
կան մյուս եկեղեցիների հետ փոխհարաբե-
րությունների հարցում առաջնորդվել է հե-
տևյալ սկզբունքով. «Միութիւն ի կառնոս, ազատութիւն՝ յեկեղայս, և սէր՝ յամենայնի»:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին
միշտ էլ կանգնել է քրիստոնեական եկեղե-
ցիների միասնության, եկեղեցիների միջև
համերաշխության, համագործակցության
ուղու վրա, հանուն քրիստոնեական կրոնի
վեհ իդեալների:

Այս գաղափարների լույսի տակ, Մայր
Աթոռը վերջին տարիներին սրտադին փոխ-
հարաբերություններ է մշակել առաջին հեր-
թին Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հետ: Հայ և
Ռուս եկեղեցիների երկու գերագույն Պե-
տերը՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. ք
և Մոսկովայի և Համայն Ռուսիո Պատրիարք
Նորին Սրբազնություն Ալեքսիս իրար հետ
կապված էին սրտառուչ բարեկամության
ամենաանկեղծ և վառ զգացմունքներով:

Երկու եկեղեցիների՝ Հայ և Ռուս եկեղե-
ցիների միջև, վերջին տարիներին հաս-
տատվեց գիտակից, համերաշխ համագոր-
ծակցություն: Հայ և Ռուս եկեղեցիների բա-
րեկամությունն արտահայտվեց այն բացա-
ռիկ ուշադրության մեջ, որով Ամենայն Հա-
յոց Հայրապետը անձամբ ղլխավորեց Ռուս
Պրավոսլավ Եկեղեցու ավտոկեֆալության
(ինքնակախության) 500-ամյակին նվիր-
ված հանդիսություններին մասնակցող Հայ
եկեղեցու պատգամավորությունը:

1954 թվի մայիսին Ռուսական Եկեղեցին
անկեղծ վշտով բաժանեց Հայաստանյայց
Առաքելական Եկեղեցու մեծ կորուստը, Վե-
հափառ Հայրապետի մահվան առթիվ:

Նույն սրտառուչ համագործակցությունը
կար Հայ և Վրաց Եկեղեցիների և միութենա-
կան բոլոր եկեղեցիների, կրոնական դա-
վանությունների միջև:

Վեհափառի սիրելի անունն ու եկեղեցա-
կան գործունեությունը թանկ էին բոլորի
համար:

Վեհափառի գահակալության օրերին շարունակվեց և սրտագին բարեկամության հասավ Հայ և Անգլիկան եկեղեցիների փոխհարաբերությունը: Այդ մասին է վկայում հանգուցյալ Հայրապետի և Քենտրեբրիի արքեպիսկոպոս Ջեոֆֆրիի միջև կատարված դեռևս անտիպ թղթակցությունների թղթածրարը, որը լույս է սփռում Հայ և Անգլիկան եկեղեցիների անկեղծ, բարեկամական, քրիստոնեական հարաբերությունների վրա:

Վեհափառի գահակալության առաջին տարիներին, պետք է խոստովանել, ցավոք սրտի, որ Մայր Աթոռի և Վատիկանի հարաբերություններում զգացվում էր որոշ աստիճանի սառնություն, այն պարզ պատճառով, որ մի շարք կաթոլիկ բարձրաստիճան հոգևորականներ անբարյալացկամորեն էին տրամադրված դեպի Մայր Աթոռ և եկեղեցիներ ունեցան մեր եկեղեցու դեմ:



Սրբազան և գերաշնորհ հայրն՝ ր, հարգելի պատգամավորներ:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը վերջացնելով իր զեկուցումը, վստահ է, որ պատկանելի ժողովը հանգամանորեն և ձեռնհաս կերպով կքննարկի այն կարևոր հարցերն ու առաջարկները, որոնք շոշափում են Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հետագա զարգացման, կազմակերպման, միասնականության խնդիրները:

Թո՛ղ Ազգային-եկեղեցական միասնականության սրտառուչ ոգին առաջնորդի մեզ Ազգային-եկեղեցական ժողովի մեր աշխատանքներում, որպեսզի մի անգամ ևս գրսևորվի Ազգի և եկեղեցու անունից հավաքված պատգամավորության կամքի, ձգտումների, գործողությունների միասնությունը և ի լուր աշխարհի հռչակվի, որ մի է Հայաստանյայց Առաքելական եկեղեցին և մի է Հայոց Հայրապետությունը:

Ամենայն Հայոց Հայրապետները միշտ էլ հանդիսացել են համայն հայ ժողովրդի Հովվապետն ու Ազգապետը: Հանգուցյալ Վեհափառ Հայրապետը նույն հոգևոր Հոր անաչառ աչքով էր նայում քաղաքական ու տնտեսական տխուր պայմանների բերումով ու հարկադրանքով հայ ազգի միասնությունից և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ընդհանրությունից բաժանված իր հայ կաթոլիկ և հայ բողոքական զավակների վրա: Քիա՛րդ համահարք և միոյ մօր որդիք երկպառակք լինիցին և ոչ միաբանք:

Մայր Աթոռի, Ամենայն Հայոց Հայրապետության և բովանդակ հայության մեծագույն ու անխաղախ ուրախություններից մեկը պիտի լինե՛ր այն, որ մեր օրերում իրականանար հայ կաթոլիկ և հայ բողոքական եղբայրների և զավակների ավելի սերտ փոխհարաբերությունը Մայր Աթոռի հետ:

Ամենայն Հայոց Ընդհանրական նոր Հայրապետի ընտրությունը վերածենք հայ ժողովրդի միասնականության և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու միության ցընծատոնի, բովանդակ հայության սիրո և մեծարանքի, խմբավածության տոնի՝ իր Մայր եկեղեցու և նրա արժանավոր նորրնությունի շուրջ:

Թո՛ղ նոր կաթողիկոսի ընտրությունը պայծառ ու անհերքելի ապացույցը լինի մեր համերաշխության, միասնության, ազգային արժանապատվության:

Ա՛յդ է պահանջում Հայաստանյայց Առաքելական եկեղեցու և հայ ժողովրդի գերագույն շահը, ա՛յդ են պահանջում ժամանակի ոգին և հանգամանքները:

Թո՛ղ հավետ անսասան մնա հայ ժողովրդի Սրբություն Սրբոց, Լուսո՝ Տաճար, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

